# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

# ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

26.12.2019թ.

N_101_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքապետարանի 08.12.2019թ-ի ավագանու հերթական 7-րդ նիստի թիվ 20,21 որոշումները:

Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__08__» ____12____2019թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ԹԻՎ 7-ՐԴ ՆԻՍՏԻ N 20,21ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

08.12.2019թ. ՆԻՍՏ N 7

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարնի ավագանու հերթական նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն` Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 4 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր 2 հարցից:

1. Համայնքի 4 և ավել երեխա ունեցող ընտանիքներին ֆինասական օգնություն հատկացնելու մասին:

Զեկուցող` Ս. Գալստյան:

2. Նոր տարվա տոնածառի հանդես կազմակերպելու համար ֆինանսական միջոց հատկացնելու մասին:

Զեկուցող` Ս. Գալստյան:

Ավագանու անդամները օրակարգը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Տիրայր Գաբոյան
2. Գագիկ Խաչատրյան
3. Պետրոս Զաքարյան
4. Վարդան Խաչատրյան

Համայնքի ղեկավար` Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 20

Լսեցին Համայնքի 4 և ավել երեխա ունեցող ընտանիքներին ֆինասական օգնություն հատկացնելու մասին:

Ներկայացվեծ , որ համայնքապետարան են դիմել համայնքի բազմազավակ ընտանիք ունեցողբնակիչներ ֆինասական որոշակի օգնություն ստանալու ակնկալիքով: Վերջին շրջանում օգնություն ստանալու համար դիմողների քանակը կապված է ամանորի և Սուրբ ծննդյան օրերի մոտենալու հետ: Համայնքապետարանը ունի նման օգնություն հատկացնելու սահմանափակ հնարավորություն ,: ուստի առաջարկվեց օգնությունը ցուցաբերել 4 և ավել երեխա ունեցող համայնքի բնակիչներին Համայնքապետը հավելեց, որ ներկայացված 16 դիմումների մասով առաջարկվող օգնության գումարը կազմում է 370000( երեք հարյուր յոթանասուն) հազար ՀՀ դրամ և առաջարկեց ավագանուն համաձայնություն տալ համայնքապետարանի բյուջեից կատարել համապատասխան ֆինանսական հատկացում:
Ավ. անդամ Տ. Գաբոյանը կարծիք հայտնեց, որ համայնքում ավելացել է սոցիալապես վատ վիճակում գտնվող ընտանիքների թիվը, որը պատճառ է նման խնդրանքով համայնքապետարան դիմելուն:
Ավագանին քննարկելով ներկայացված խնդիրը՝

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 370000( երեք հարյուր յոթանասուն) հազար ՀՀ դրամ հատկացնել 4 և ավել երեխա ունեցող ընտանիքներին :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3 ԴԵՄ 0 Ձեռնպահ 0

1. Տիրայր Գաբոյան
2. Գագիկ Խաչատրյան
3. Պետրոս Զաքարյան
4. Վարդան Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 21

Լսեցին Նոր տարվա տոնածառի հանդես կազմակերպելու համար ֆինանսական միջոց հատկացնելու մասին:

Համայնքի մշակույթի տան աշխատակից Ս. Գաբոյանը տեղեկացրեծ, որ համայնքում ամենամյա տոնածառի հանդես կազմակերպելու համար, որին մասնակցում են համայնքի դպրոցահասակ երեխաներ ու «Բասեն» ազգագրական համույթը, համայնքի բնակիչներ՝ անհրաժեշտ է որոշակի ֆինանսական միջոց, ինչպես տոնածառ ու խաղալիքներ, այնպես էլ երեխաներին համապատասխան նվերներ ձեռք բերելու համար: Համայնքապետ Ս. Գալստյանը, նույպես կարևորելով համայնքում ավանդույթ դարձած ամենամյա Նոր տարվա հանդես կազմակերպելը, առաջարկեց համայնքապետարանի բյուջեից 370000( երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ հատկացնել Նոր տարվա հանդեսի միջոցառումներ կազմակերպելու համար՝ համայքապետարանի մշակույթի տան դահլիճում:
Քննարկումից հետո ավագանին `

ՈՐՈՇԵՑ՝

Համաձայնություն տալ համայնքապետարանի բյուջեից 370000( երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ հատկացնել Նոր տարվա հանդեսի միջոցառումներ կազմակերպելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ 3 ԴԵՄ 0 Ձեռնպահ 0

1. Տիրայր Գաբոյան
2. Գագիկ Խաչատրյան
3. Պետրոս Զաքարյան
4. Վարդան Խաչատրյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան